



Զահրատ

Չարմանահրաշ

Օր կ'ըլլայ
Ես եւ ինքս ձեռք ձեռքի
Անօրինակ փնտոտութի մը կ'ելլենք
Ու ծալքերուն մէջ էութեանս անպարփակ
Ինքնութիւնս կը պեղենք

Միօրինակ տարագներու յաճախանքէն ձանձրացած
Օր մ'ալ մենք
Բագներեսակ ինքնութիւնս ճանչնալ կ'ուզենք մարդկօրէն

Դիւրին չէ
Անջրպետին մէջ մոլորակ քարկոծելու չի նմանիր
Ինքնութիւնս այնքան խոր է այնքան խիտ
Որ ձեր գիտցած տիեզերքին սահմաններէն կը յորդի
Երկինքն ի վեր դուք ի վերջոյ քանի՞ հատ աստղ կը համրէք
Մինչ եթէ
Երբ օր ըլլայ ու դուք ձեզի ձեր ինքնութիւնը պեղէք
Ի՛նչքան արեւ կը գտնէք հոն քանի քանի տիեզերք
Չէ՛ք գիտեր ինչ հարուստ էք

Ես եւ ինքս եւ դուք եկէք ձեռք ձեռքի
Մեր էութեան խառնարանին մէջ անծիր
Չարմանահրաշ փնտոտութի մը ելլենք